Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում։

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Անթառամ Մելիքյան

Երևան 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ 6
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ 11
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 22
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնական գործընթացում սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացումը տարբեր է, և առարկայի դասավանդման ընթացքում տարբեր տեխնոլոգիաներ ու մեթոդներ կիրառելով՝ հնարավոր է վերլուծել, պարզաբանել նաև սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծարարության դրսևորման առանձնահատկությունները, նրանց ստեղծագործական ունակությունների զարգացման հնարավորությունները:

Մեր հետազոտության արդյունքները, տեսական մեկնաբանությունները, փորձարարական հետազոտության մեջ կիրառված մեթոդները կարող են օգտակար լինել նմանօրինակ հարցերով զբաղվող մասնագետներին, ինչպես մանկավարժներին ու ուսանողներին այդպիսի հետազոտություններ կատարելիս:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի ուսուցման շրջանակում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել առարկայի դասավանդման ընթացքում ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացման վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. Առարկայի դասավանդման ընթացքում կիրառել ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ նպաստելով սովորողների մեջ ստեղծարարության, ինքնուրույնության, նախաձեռնության ունակությունների զարգացմանը:

3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և ներկայացնել եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ առարկայի դասավանդման ընթացքում կիրառելով ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ կարող ենք զարգացնել

սովորողների ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը ։

Հետազոտության ընտրանք՝ տարրական օղակի աշակերտներ

Հետազոտության մեթոդներն են ՝ զրույց-քննարկում, համեմատում, դիտում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր սովորող օժտված է արժանիքներով ու ունակություններով: Իր կարողություններին համապատասխան ստեղծում է նոր նյութական և հոգևոր արժեքներ, որոնք նախկինում երբեք չեն եղել: Այդ արժեքները ծնվում են ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների շնորհիվ: Նախաձեռմությունն ու ստեղծագործական ունակությունը ծնում են նորը, ակներևը, նախկինում երբեք գոյություն չունեցածը: Ստեղծագործական ունակության դրսևորման արդյունքում ստեղծվում է, հայտնաբերվում, հորինվում որևէ նոր բան: Սովորողի ինքնուրույն, նախաձեռնողական ու ստեղծագործական գործունեությունը անկրկնելի է, ինքնօրինակ և եզակի (հասարակական և անհատական առումով): Նույնիսկ բարձրակարգ կենդանիներն ունեն ստեղծագործականության ինչ-որ նախադրյալներ, սակայն ստեղծագործական գործունեությունը բնորոշ է միայն մարդուն: Ստեղծագործական գործունեությունը մարդու աշխատանքային գործընթացում առաջացած ընդունակությունն է՝ իրականությունից ստեղծված նյութից ստեղծելու նոր իրողություն, որը բավարարում է բազմազան հասարակական պահանջմունքների:

Ինքնուրույնությունն ու ստեղծարարությունը անձին բնորոշ ստեղծագործական տաղանդի մակարդակնեն, որը ձևավորվում է անձի կայուն խառնվածքի ու անհատականության պարագայում: Ստեղծարարությունն անմիջականորեն առնչվում է նախաձեռնողությանն ու ինտելեկտին, այն ինտելեկտի զարգացման որոշակի աստիճան է և հանդես է գալիս ինտելեկտի գործառույթին զուգահեռ, կախված է անձի հոգեբանական բնութագրից:

Նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, առնչվելով մտածողության բաղադրատարրերին, իրենց նախադրյալներով գծագրում են սովորողի մտավոր, ստեղծագործական ունակությունների սահմանները, հնարավորություն է տալիս վերարտադրելու ձեռք բերած գիտելիքները, գործի դնելու մտածողությունը: Ստեղծագործական ունակությունը ակներև է դարձնում մտածողության դրսևորման

յուրահատկությունը, սովորողի ունակությունն է դատողություններ և եզրահանգումներ անելու կյանքի և իրականության բազմազան իրողությունների վերաբերյալ:

Ստեղծագործական, նախաձեռնական ունակությունների զարգացումն ու դրսևորումն անմիջականորեն առնչվում են ինտելեկտին, որի միջոցով էլ մարդը կարողանում է արտահայտել գաղափարներն ու մտահաղացումները: Ըստ Թորենսի՝ ստեղծարարությունը ընդհանուր կարողություն է, որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և արդյունավետ մտածողության կարողության վրա: Ստեղծարարությունը բնորոշվում է որպես գիտելիքներում թերությունների, բացթողումների, աններդաշնակության սուր ընկալում: Գիլֆորդը առանձնացնում էր ստեղծարարության չորս չափանիշ՝ սահունություն, ճկունություն, յուրօրինակություն և մշակվածություն: Թորենսի մեկնաբանությամբ սահունությունը հնարավորինս շատ գաղափարներ ստեղծելու կարողությունն է, ճկունությունը՝ խնդիրները լուծելիս բազմատեսակ ռազմավարություններ կիրառելու, յուրօրինակությունը՝ ոչ սովորական, անսպասելի գաղափարներ առաջ քաշելու, մշակվածությունը՝ առաջացած մտքերը մանրամասնորեն մշակելու կարողությունը:

Հայտնի տեսաբանները, մանկավարժները բազմազան բնորոշումներ են տվել ստեղծարարության գործընթացին: Երբեմն ստեղծագործելու շնորհը առկա փորձի վերափոխման հետևանք է դիտարկվում, երբեմն էլ նոր արարում: Բոլոր դեպքերում ստեղծարարական ձիրքը նոր մտքի, գաղափարին ծնունդ տալու ունակությունն է: Ստեղծարարական, նախաձեռնողական ունակությունների ի հայտ գալն արդեն խոսում է տվյալ սովորողի ինքնուրույնության, աշխարհընկալումների և մտածողության մասին: Զարգացնում է ստեղծագործական մոտեցումը և քննադատական մտածողությունը, առանց որոնց չի կարելի պատկերացնել մարդու և ոչ մի գործունեություն:

Որոշ հեղինակներ առանձնացնում են ստեղծարարության մակարդակներ: Գիզելինը տարանջատում է բարձրագույն և ցածրագույն ստեղծարարություն: Առաջինը պայմանավորված է առկա գիտելիքների կիրառման ոլորտի ընդլայնմամբ: Բարձր մակարդակի ստեղծագործական գործունեությունը կապված է որակապես նոր հասկացության ստեղծման հետ, որը շատ թե քիչ հեղաշրջում է կատարում

գիտության մեջ: Ա. Գ. Գալինը ցածր մակարդակի ստեղծագործական գործունեությունը ռացիոնալ համակարգված գիտելիքների, դրանց համակցման արդյունք է համարում, որը չի ենթադրում ինտուիտիվ տարրի առկայություն: Բարձրագույն տիպի ստեղծագործական գործունեությունը ներառում է նաև ինտուիցիան: Ըստ Ե. Պ. Իլյինի՝ ստեղծարարության բարձրագույն մակարդակը ոչ բոլորին է հասանելի, ինչը խոսում է անհատների մոտ ստեղծագործական ներուժի՝ ստեղծագործելու կարողության, տարբեր մակարդակների մասին: Մ. Բոդենը տարբերակում է ստեղծարարության երեք տիպ՝

1. համադրական ստեղծարարություն՝ նոր մտքի բացահայտում արդեն հայտնի մտքերի համադրմամբ,

2. հետազոտական ստեղծարարություն՝ խնդիրների ձևակերպում, դեռևս չուսումնասիրված հարցերի առաջքաշում և լուծում,

3. ձևափոխվող ստեղծարարություն՝ գաղափարների առաջադրում, որոնց իրագործումը նախկինում անհավանական էր թվում:

Ստեղծարարությունը անհատի ստեղծագործական ունակությունն է, որը բնութագրվում է նոր հիմնարար գաղափարներ ստեղծելու պատրաստակամությամբ, նախաձեռնությամբ ու սովորողի ինքնուրույն գործունեությամբ: Ստեղծարարությունը ներառում է խնդիրների, գիտելիքների բացակայության և անհամապատասխանության նկատմամբ բարձր զգայունություն, այդ խնդիրների բացահայտմանն ուղղված գործողություններ, հիպոթեզների վրա հիմնված լուծումների որոնում, հիպոթեզների փորձարկում և փոփոխություն:

Ստեղծարար սովորողը զարգացնում է տարբեր մոտիվների ազդեցությամբ առաջացած գաղափարների և մտահղացումների մարմնավորման կարողությունը, ինչի համար կիրառում են երևակայությունը, հույզերը, դիտարկման ունակությունը, նյութի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը և սովորելու գործընթացում ստացած գիտելիքը: Նախաձեռնության, ինքնուրույնության, ստեղծարարական ունակությունները յուրօրինակ արտացոլում են գտնում սովորողների մեջ: Դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել,

տարբեր պահանջներ իրականացնել, ստեղծագործել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, ստեղծագործական մղումով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ, բայց կա նաև ստեղծելու, արարելու ձգտում: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է ստեղծագործել, աշխատել՝ առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով:

Ստեղծարարական ունակությունների զարգացման գործում մեծ նշանակություն ունեն գրականությունը, երաժշտական դաստիարակությունը, որոնց նպատակն է երեխային ոչ միայն ապահովել համապատասխան ունակություններով, գիտելիքներով, այլև երեխային հաղորդակից դարձնել գրավիչ երաժշտական աշխարհը և դրանով իսկ հարստացնել երեխայի անհատականությունը:

Ստեղծագործելով մարդն ինքնարտահայտվում է, իրագործում իր մտքերն ու ցանկությունները: Ստեղծարարությունը ոչ միայն պատանեկան տարերք է, այլև հասուն մտքի, գաղափարի դրսևորում: Ուրեմն ստեղծագործական ունակությունները սահման կամ սահմանափակում չունեն: Ցանկացած մարդ, լինի արվեստագետ թե գրող, աշակերտ թե ուսուցիչ կարող է իր ստեղծագործական ձիրքը արտահայտել: Տեղի է ունենում փոխակերպում: Իրականություն են դառնում, կյանքի կոչվում մտքեր ու գաղափարներ, ծնվում են նոր ստեղծագործություններ: Մարդն ապրում է՝ յուրաքանչյուր պահի զգալով, ապրելով արարելու, ստեղծելու բերկրանքը:

Կրթական ծրագրերը կարևորագույն նպատակներից մեկը պետք է լինի երեխաների ինքնուրույն գործունեության, նախաձեռնողական, ստեղծագործական ունակությունների զարգացման համար պայմանների ստեղծումը, համամարդկային արժեքներին հաղորդակցումը, շփումը:

Անձի դաստիարակությունը և ներդաշնակ զարգացումը, ինչը հանդիսանում է դպրոցական կրթության հիմնական նպատակը, անհնար է առանց որևէ առարկայի հետ նրա հաղորդակցության: Տարբեր առարկաների ուսումնասիրությունը նրբացնում է նրա ընկալումը և զգացողությունը, երևակայության ունակությունը, զարգացնում է ստեղծագործական մոտեցումը և քննադական մտածողությունը, առանց որոնց չի կարելի պատկերացնել մարդու ցանկացած գործունեություն:

Անձի դաստիարակության-զարգացման համար անհրաժեշտ աշխատանքային գործունեությունը, նոր ուսումնական պլանի համաձայն, ինտեգրված է արվեստի ուսուցման հետ: Ցանկացած առարկայի ուսուցման շրջանակներում ուշադրությունը կենտրոնանում է տրամադրվածությունների, վերաբերմունքների, գործնական, ստեղծագործական և հետազոտական-որոնման կարողությունների և հմտությունների զարգացման և գիտելիքի կիրառման վրա Այս ուղղության շրջանակներում աշակերտները ձեռք են բերում գործնական կարողություններ և հմտություններ, ծանոթանում և տիրապետում են կերպարվեստի և կիրառական արվեստի տարրերին, սկզբունքներին, արտահայտչականության միջոցներին, տարբեր տեխնիկայի, նյութի, գործիքների և ընթացակարգերի:

Աշակերտները զարգացնում են տարբեր մոտիվների ազդեցությամբ առաջացած գաղափարների և մտահղացումների մարմնավորման կարողությունը, ինչի համար կիրառում են երևակայությունը, հույզերը, դիտարկման ունակությունը, նյութի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը և սովորելու գործընթացում ստացած գիտելիքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի ուսուցման շրջանակում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել առարկայի դասավանդման ընթացքում ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացման վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. Առարկայի դասավանդման ընթացքում կիրառել ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ նպաստելով սովորողների մեջ ստեղծարարության, ինքնուրույնության, նախաձեռնության ունակությունների զարգացմանը:

3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և ներկայացնել եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ առարկայի դասավանդման ընթացքում կիրառելով ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ կարող ենք զարգացնել սովորողների ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը :

Հետազոտության ընտրանք՝ տարրական օղակի աշակերտներ

Հետազոտության մեթոդներն են ՝ զրույց-քննարկում, համեմատում, դիտում:

Առարկայի հիմնական խնդիրն է, ինչպես նշվում է, օժանդակել երեխային աշխարհընկալման առաջին քայլերն անելու ճանապարհին, օժանդակել նրան ճանաչելու իրեն շրջապատող իրերն ու երևույթները: Իրեն շրջապատող աշխարհին ծանոթանալուն զուգահեռ երեխան անընդհատ փորձում է ընդլայնել իր

պատկերացումները, մտահորիզոնը, ձեռք բերելու կայուն գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Նշված դասընթացը ինտեգրված է, քանի որ դրան բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ են պլանավորում դասընթացի իրագործման կարգը:

2. Ուսումնական գործընթացի կենտրոնում սոցիալական և տնտեսական նշանակալի թեմաներն են, որոնք բխում են աշակերտների հետաքրքրություններից:

3. Ուսումնառությունը ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցական համայնքի բոլոր անդամները, ուսուցիչներն ու աշակերտները հավասար մասնակցություն են ունենում որոշումների կայացմանը:

4. Ուսումնական ծրագիրը կազմված չէ առանձին առարկաներից:

Ինչպես նկատում ենք, նշված դասընթացում հասարակական կարևորություն ունեցող հարցեր են: Դասընթացը ընդգրկում է նաև տարբեր առարկաներից ու ոլորտներից տեղեկություններ ու գաղափարներ: Ասվածից հետևում է, որ ուսումնական ծրագրի ինտեգրումը բնավ էլ չի նշանակում, որ անտեսվում են պարտադիր ուսումնական առարկաները: Իրողությունն այն է, որ պարտադիր բովանդակությունն այս դեպքում վերադասավորվում է այնպես, որ աշակերտներին իմաստակերտման հնարավորություններ ընձեռնվեն:

Երեխայի բնաճանաչողական ընդունակություններին հատուկ են այնպիսի որակներ, ինչպիսիք են բնության օբյեկտները, երևույթները ընկալելու, ճանաչելու մտավոր արձագանքների արագությունը, դրանց օբյեկտիվ գնահատական տալու, շնչավորելու, հարաբերակցվելու ընդունակությունը: Այդ ունակությունները զարգացնելու նպատակով պետք է օգտագործել տարբեր միջոցներ, օրինակ՝ դիդակտիկ խաղեր, հանելուկներ, հեքիաթներ, պարզագույն թվաբանական խնդիրներ, էքսկուրսիաներ և այլն:

Ժամանակակից էկոլոգիական կրթության և դաստիարակության հայեցակարգը հիմնավորելիս պետք է հաշվի առնել էկոլոգիական կայուն զարգացման հայեցակարգային գաղափարները: Ներկայումս գոյություն ունի հակասություն դպրոցականների էկոլոգիական կրթության նպատակների,

խնդիրների և նրա բովանդակության տարբերակման միջև: Դա պայմանավորված է նրանով, որ էկոլոգիական դաստիարակության առաջադիր նպատակներն ու խնդիրները հիմնվում են ժամանակի նոր էկոլոգիական պահանջների վրա (էկոկենտրոնություն), իսկ դպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակությունը դեռևս հիմնվում է մարդաբանական տեսության վրա:

Դպրոցականների էկոլոգիական կրթությանը բնորոշ է հետևյալ օրինաչափությունը. մարդակենտրոնությունը առավել ցայտուն է դրսևորվում էկոլոգիական կրթության համակարգի սկզբնական աստիճաններում, և որքան բարձր է այդ աստիճանը, այնքան ավելի թույլ է արտահայտված հակասությունը: Այդ օրինաչափությունն առաջին հերթին պայմանավորված է հասարակության, մասնավորապես՝ մարդու արժեքային կողմնորոշումների փոփոխման, շրջապատող իրականության նկատմամբ սպառողական մոտեցման վերացման անհրաժեշտությամբ: Մեծ արժեքների համակարգում մարդկանց մեծամասնությունը դեռևս կենտրոնացած է օգտակարության գաղափարի վրա, և մեր հասարակության մեջ «օգտակարի», «տնտեսական նպատակահարմարության», «գիտական հաշվենկատության» արժեքը դեռևս անհամեմատ ավելին է, քան հուզականի, մարդասիրականի արժեքը: Ինչ խոսք, առանց աշխարհի քարտեզի և արժեքների համակարգի արմատական փոփոխության կրթության, գործունեության և կենսակերպի համակարգում էկոլոգիական ուղղվածության ցանկացած ծրագիր ենթակա է տապալման այն մարդկանց կողմից, որոնց աշխարհազգացողությունն ու աշխարհընկալումը հակաէկոլոգիական են:

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացը արմատավորում ու զարգացնում է էկոլոգիական դաստիարակությունը, որը անձի անընդհատ էկոլոգիական դաստիարակության առաջին աստիճանն է, ապա նրա նպատակն ու խնդիրները որոշվում են ընդհանուր էկոլոգիական դաստիարակության հայեցակարգի հիման վրա: Էկոլոգիական դաստիարակության հայեցակարգի համաձայն՝ էկոլոգիական դաստիարակությունը ուսուցման, դաստիարակության, մտածողական, հուզազգացմունքային ամբողջական գործընթաց է: Այդ որակները ձևավորվում են բնաճանաչողական և բնապահպանական տեսական և պրակտիկ գիտելիքների, կարողությունների, արժեքային կողմնորոշումների, շրջակա միջավայրում վարքի և

գործունեության հասարակականորեն և բնապահպանության օրենքով սահմանված նորմերի յուրացման միջոցով: Էկոլոգիական դաստիարակության նպատակը էկոլոգիական մշակույթի ձևավորումն է, որը դրսևորվում է շրջակա միջավայրի և նրա ամբողջության պահպանման նկատմամբ երեխաների պատասխանատու վերաբերմունքի մեջ, որի հիմքում ընկած են հասարակության մեջ ընդունված բարոյական և իրավական նորմերը:

Էկոլոգիական դաստիարակության միջոցով պետք է անհատի աշխարհաճանաչողությունը զարգացնել և հասցնել այնպիսի մակարդակի, որի շնորհիվ նա ընդունակ կլինի իր խմբի համար կենսական անհրաժեշտություն ունեցող հարցերի լուծման առումով պատասխանատվություն կրելու (գիտակցական մոտեցման ցուցաբերում): էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են.

1. շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,
2. քաղաքացու դաստիարակում,
3. հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում:

Էկոլոգիական դաստիարակության նպատակի և խնդիրների շուրջ տարբեր հեղինակներ առաջարկում են տարբեր բանաձևեր՝

- էկոլոգիական մշակույթի ձևավորում, երեխայի վարքում բնության հետ գիտակցված հարաբերությունների որոշակի մակարդակի ձևավորում, -բնության, մարդկանց, իր և կյանքում իր դերի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի մշակում,

- բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում,

- երեխայի մեջ բնության պահպանման, բարելավման, զարգաց ման անհրաժեշտության գիտակցման դաստիարակում,

- երեխաների էկոլոգիական գիտակցության ձևավորում, որը պետք է հիմնվի նրա խոր հուզազգացմունքային փորձի վրա,

- էկոլոգիական գիտակցության դրդապատճառային հիմքերի ձևավորում:

- երեխայի մեջ իր գոյության կենսամիջավայրի նկատմամբ վստահության զարգացում.

- կենդանի և անկենդան բնության տարբերությունների վերաբերյալ տարրական գիտելիքների, նրանց վերաձևավորման հարցում մտավոր և ֆիզիկական աշխատանքի դերի մասին պատկերացումների ձևավորում.

- վայրի բնության հետ մարդու խելամիտ փոխհարաբերության, և մարդու ստեղծարար աշխատանքի և մտավոր ստեղծագործության կարողությունների ձևավորում.

- արժեքային դիրքորոշման ձևավորում:

Սրանք հիմք են հանդիսանում երեխաների՝ մարդու իրավունքների և պարտականությունների հետևողական ուսուցման համար:

Դասընթացի հայեցակարգում նշվում է սկզբունքների երկու խումբ՝ ընդհանուր մանկավարժական (մարդասիրության, գիտականության, համակարգվածության և այլն) և յուրահատուկ (կանխատեսման, ինտեգրման և այլն): Բացի համընդհանուր դիդակտիկական սկզբունքներիցդասընտացին վերաբերում են նաև միասնականացման, անընդհատության, բնության գործառույթների ուսուցանող, էկոմարդասիրացման սկզբունքներ :

Դպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակության ընտրության սկզբունքների երեք խումբ է առանձնացվում դասընթացում.

- ընդհանուր դիդակտիկական (գիտականությունը, մատչելիությունը, համակարգվածությունը, մարդասիրությունը),
- էկոլոգիական կրթության համար յուրահատուկ (կանխատեսական, գործունային, միասնականացման, հաջորդականության),
- տարրական կրթության համար յուրահատուկ սկըզբունքները (ամբողջականությունն ու կառուցվածքայնությունը):

Այսինքն՝ դասընթացի տեխնոլոգիական համակարգում գիտականության սկզբունքը ենթադրում է դպրոցականների ծանոթությունը էկոլոգիական գիտելիքներին, որոնք երեխայի գործողությունների դրդապատճառների, աշխարհայացքի, էկոլոգիական գիտակցության ձևավորման, իմացական հետաքրքրությունների զարգացման հիմք կծառայեն:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաներին անհրաժեշտ է էկոլոգիական գիտելիքների այնպիսի ծավալ, որը կօգնի նրանց հասկանալու բնության մեջ իրենց ճիշտ դրսևորելու անհրաժեշտությունը: Այսինքն՝ բնության նկատմամբ հուզական վերաբերմունքը և նրա մասին գիտելիքները կարող են մեծ արդյունք տալ: Այդ նպատակով մեր կողմից մշակվել են դպրոցականների հետ տարվող պարապմունքների թեմաներ, որոնք կնպաստեն նրանց էկոլոգիական գիտելիքների յուրացմանը և էկոլոգիական կարողությունների ձևավորմանը: Դիտարկենք դասընթացի տարբեր թեմաների ուսուցման տեխնոլոգիական հնարավորությունները սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների ձևավորման ու զարգացման գործընթացում:

Թեմա 1. Բնության մեջ գործող փոխադարձ կապերը: Երեխաների դիտումները բնության մեջ (էքսկուրսիա), մանկապարտեզի կենդանի անկյունում և պարտեզում, պլաստիլինից կենդանիների, սնկերի, ծաղիկների ծեփում, նկարչություն, երաժշտական գործունեություն՝ «Բնությունը երգերի մեջ», խաղեր, հանելուկ-առաջադրանքներ:

Թեմա 2. Նյութերի շրջանառությունը բնության մեջ: Տերևների քայքայվելը և վերածվելը հողի, ծանոթություն անձրևաորդերի հետ, նրանց նշանակությունը բնության մեջ և պահպանման խնդիրը:

Թեմա 3. Արև, նրա նշանակությունը բույսերի համար: Բանաստեղծությունների ընթերցում՝ նվիրված արևին, նամակներ և բանավոր ուղերձներ արևին, նկարչություն, հանելուկ -առաջադրանքների կատարում:

Թեմա 4. Ջուր, նրա շրջանառությունը և տարբեր վիճակները: Կաթիլի ճանապարհորդությունը (մուլտֆիլմի դիտում, «Հավերժական ճամփորդը» պատմվածքի ընթերցում, դիտումներ շենքում, փողոցում, պուրակում, պարտեզում), փորձեր և այլն:

Թեմա 5. Գունավորման դերը կենդանիների կյանքում: Կենդանիների գույների, դրանց նշանակության և փոփոխությունների մասին հետաքրքրաշարժ նյութերի ուսումնասիրություն, բեմականացումներ և այլն:

Թեմա 6. Կենդանիների տեսակները, նրանց դերը համակեցությունների մեջ: Կենդանիների վարքի, սննդի, իրենց բնակության վայրի, ձևերի ուսումնասիրում:

Օրինակ՝ պատմել, թե տրված նկարում ո՞ր կենդանին է գիշատիչ և ինչո՞վ են նրանք սնվում:

Թեմա 7. Բնության բազմաձևության պահպանման անհրաժեշտությունը Դիտումներ բնության մեջ, մարդը՝ որպես բնության մի մասնիկ, նրա կապը կենդանական և բուսական աշխարհի հետ և այլն:

Դիտարկենք դասի նմուշ-օրինակ:

Թեման - «Ջրի շրջապտույտը»

Նպատակը - Երեխաների մեջ ձևավորել որոշակի գիտելիքներ ջրի առաջացման, նրա հատկությունների և անհրաժեշտության մասին, զարգացնել նրանք ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծագործական հմտություններն ու կարողությունները:

Պարապմունքի կահավորումը- Դասարանում պետք է ստեղծել բոլոր պայմանները (նկարների, ծաղիկների ցուցադրում, մանկական երգեր) երեխաների տրամադրությունը բարձր պահելու համար:

Դասի ընթացքը

Զրույցի ընթացքում անպայման նշել, որ ջուրը խիստ անհրաժեշտ է և՛ բույսերի, և՛ կենդանիների, և՛ մարդկանց համար: Մարդիկ ջուրն օգտագործում են խմելու, մաքրության, լողանալու, ծաղիկները, բույսերը խնամելու նպատակով: Խմելու համար օգտագործում են մաքուր ջուր, որը ջրատար խողովակներով հոսում է դեպի բնակարաններ: Ուսուցիչը զրուցում է երեխաների հետ ջրի առաջացման և նրա անհրաժեշտության մասին. ինչի՞ց է առաջանում ջուրը, ի՞նչ դեր ունի այն մարդու, բույսերի և կենդանիների կյանքում: Ինչպե՞ս են նրանք ջուրը վերցնում բնությունից: Սովորողների նախաձեռնության, ստեղծագործական ունակությունների զարգացման համար միասին դիտել անձրևը, առվակների հոսքը, նկարների միջոցով ցույց տալ ջրի հետ կապված տարբեր տեսարաններ, պատմել անապատների մասին. որտեղ ջուր չկա, ներկայացնել ջրի անհրաժեշտությունը մարդկանց, բույսերի, կենդանիների կյանքի հարատևման առումով, նրանց հետ մշակել ջուրը խնայողաբար օգտագործելու ձևերը: Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է բնության մեջ ջրի շրջանառությունը և գծանկարների միջոցով ցույց տալիս (օվկիանոսից, ծովերից և

գետերից ջուրը գոլորշիանում է, երկնքում կուտակվում և ապա անձրևի տեսքով թափվում ցած ու ներծծվում հողի մեջ՝ ջրելով ծառերը, խոտերը): Էկոլոգիական այբբենարանից ուսուցիչը կարդում է հանելուկներ ջրի մասին:Երեխաների համար կարելի է ընթերցել «Հավերժական ճամփորդը» պատմվածքը, «Ամպիկի երգը» բանաստեղծությունը, հանելուկներ և այլն: Հետագա պարապմունքների ընթացքում պետք է էլ ավելի խորացնել ջրի և նրա հատկանիշների մասին երեխաների ունեցած գիտելիքները: Նպատակահարմար և արդյունավետ է նույն մեթոդիկաների կիրառմամբ կազմակերպել և անցկացնել նաև մյուս պարապմունքները՝ այլ թեմաներով:

Կյանքի և գործունեության ընթացքում ձևավորվում են երեխաների փոխհարաբերություններն իրենց հասակակիցների, մեծահասակների և շրջակա միջավայրի օբյեկտների հետ, գոյանում է միմյանց և բնության հետ փոխադարձ կապերի, շփման և միջավայրում իրեն բարեկիրթ դրսևորելու վարքի փորձ, զարգանում են նրանց նախաձեռնության ու ինքնուրույնության կարողությունները: Հատկապես մեծ է երեխաների՝ բնության մեջ, բնության օբյեկտների հետ աշխատելու գործողություններին գնահատական տալու նշանակությունը:

Դասընթացը ներառում է տարբեր մեթոդներ: Համոզման մեթոդը ուղղված է բնության մեջ իրեն ճիշտ դրսևորելու, բնությունը ճանաչելու ունակությունների ձևավորմանը: Պրակտիկ գործողությունների վարժեցման, ընտելացման մեթոդը ուղղված է բնաճանաչողական, բնության վերականգնման պարզագույն գործողությունների տիրապետմանը: Վարժեցման մեթոդի էությունը բնությունը ճանաչելու, իրեն նրա մի մասնիկը զգալու, բնական համալիրների կարևորությունը իմանալու, բնության, մարդկանց համար բարի գործեր կատարելու մեջ երեխաներին վարժեցնելն է:

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացին, խաղերին և գործունեության մյուս ձևերին երեխաները մասնակցում են բավականին ակտիվորեն և մեծ հետաքրքրությամբ, քանի որ նման պարապմունքների ընթացքում երեխան շփվում է կենդանի էակների, բույսերի, ծաղիկների հետ, աստիճանաբար ճանաչում է իրեն շրջապատող միջավայրը՝ ձեռք բերելով բնապահպանական գիտելիքներ, ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծագործական կարողություններ և

հմտություններ, որոնք հիմք են հանդիսանում երեխայի բնաճանաչողական ունակությունների, բարոյակամային որակների, գեղագիտական ունակությունների, ուշադրության, հիշողության և այլ հոգեկան նորագոյացումների ձևավորման ու զարգացման համար:

Երեխաների մեջ առաջին անգամ ձևավորվում են պատկերացումներ իրեն շրջապատող աշխարհի, բնության մեջ գոյություն ունեցող փոխադարձ կապերի վերաբերյալ, որոնք հիմք կդառնան նրանց էկոլոգիական աշխարհայացքի ու մշակույթի, շրջակա միջավայրի, իր առողջության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման համար: Շեշտը պետք է դրվի բնության մեջ գոյություն ունեցող փոխադարձ կապերի մասին երեխաների ունեցած տարրական, բայց և գիտական պատկերացումների զարգացման վրա: Երեխաները պետք է վաղ մանկական տարիքից սովորեն, թե կենդանի մարմինները որքան են կախված բնական միջավայրից, և որ մարդը բնության անբաժանելի մասնիկն է: Այդպիսի մոտեցումը հնարավորություն կընձեռի երեխաներին հասկանալու մարդու՝ շրջակա միջավայրի հետ ունեցած փոխհարաբերությունները և նրա գործունեության հետևանքները բնության վրա: Այս հարցին պետք է մոտենալ և՛ բարոյական, և՛ գեղագիտական, և՛ աշխատանքային, և՛ ֆիզիկական, և՛ իրավական տեսանկյուններով: Մեծ նշանակություն պետք է տրվի բարոյական տեսանկյունին: Հասակակիցների, մեծահասակների և բնության հետ փոխհարաբերությունների ընթացքում դպրոցականը որոշակի բարոյական փորձ ու բարոյական վարքի սովորույթներ է ձեռք բերում: Անհրաժեշտ է և՛ ընտանիքում, և՛ դպրոցում, և՛ բնության մեջ երեխայի հետ տարվող աշխատանքներում խաղի, պարապմունքների, աշխատանքային գործունեության այնպիսի ձևերի կազմակերպում, որոնց միջոցով երեխայի մեջ ձևավորվեն բարոյական ճիշտ վարքագիծ, բնության, իրար նկատմամբ պատասխանատվություն կրելու ունակություն: Բնության մեջ կազմակերպած պարապմունքների, շրջապատի հետ շփման մեջ մտնելու շնորհիվ երեխան ձեռք է բերում անձնական փորձ, որի միջոցով գիտակցում է իր տեղը բնության մեջ, ըմբռնում վարքի նորմերի ճիշտ դրսևորման ձևեր՝ ոչինչ չքանդել, չապականել, չտրորել, այլ տնկել, ջրել, խնամել, կերակրել, պահպանել: Այս իմաստով հատկապես կարևոր է երեխայի կողմից բնության մեջ կատարած որևէ լավ արարքի գնահատումը

ծնողների և ուսուցիչների կողմից, որը կնպաստի գնահատման և ինքնագնահատման նրանց ընդունակության զարգացմանը: Դպրոցականների հետ կարելի է անցկացնել բարոյական զրույցներ, որոնց թեման պետք է լինեն երեխայի՝ շրջակա միջավայրում, բնության մեջ իրեն պահելու վարքի կանոնները, բնության օգտակարությունը, նրան հասցված վնասի հետևանքները: Նշված դասընթացը նպաստում է երեխայի մեջ բնության գեղեցկության, նրանց հույզերի, ըմբռնումների, զգացմունքների և պատկերացումների զարգացմանը:

Ինչպես նկատում ենք, նշված դասընթացում հասարակական կարևորություն ունեցող հարցեր են: Դասընթացը ընդգրկում է նաև տարբեր առարկաներից ու ոլորտներից տեղեկություններ ու գաղափարներ: Ասվածից հետևում է, որ ուսումնական ծրագրի ինտեգրումը բնավ էլ չի նշանակում, որ անտեսվում են պարտադիր ուսումնական առարկաները: Իրողությունն այն է, որ պարտադիր բովանդակությունն այս դեպքում վերադասավորվում է այնպես, որ աշակերտներին «իմաստակերտման հնարավորություններ ընձեռնվեն»:

Էկոլոգիական դաստիարակության լավագույն միջոցներ են նաև դպրոցում կազմակերպվող տոները, հանդեսները, զվարճանքները: Այդ հանդեսների բովանդակության մեջ անպայման պետք է ներառել կենդանի և անկենդան բնությունն՝ իր բոլոր ձևերում: Օրինակ՝ Վարդավառը, որը մեր նախնիների համար եղել է ջրի, բերք ու բարիքի, բնության պաշտամունքի և գեղեցկության գովերգման տոն: Տոնակատարությունը հարմար է նշել բացօթյա՝ մոտակա բացատում,դաշտում, մանկապարտեզի բակում, որպեսզի երեխաները հաղորդկացվեն բնությանը: Դպրոցականների բնաճանաչողական ընդունակությունների զարգացման միջոց են նաև Ծաղկի տոնը, Թռչնի օրը, Անտառի օրը, Ջանգյուլումը, Ծառզարդարը և այլ տոներ:

Սակայն նշված դասընթացի տեխնոլոգիական հիմնական միջոցը եղել ու մնում է աշխատանքը: Բնության մեջ կատարվող աշխատանքը բարոյական, աշխատանքային, մտավոր, ֆիզիկական, գեղագիտական դաստիարակության հիմքն է: Այն հատկապես նպաստում է երեխաների դիտողականության զարգացմանը, բնության նկատմամբ խնամքով վերաբերվելու ունակության ձևավորմանը: Կատարելով իր տարիքին և ուժերին համապատասխան բազմապիսի աշխատանք

(մեծահասակների հետ ծաղիկ տնկել, սերմեր աճեցնել, ջրել, մշակել)՝ երեխան ճանաչում է բնությունը և ձեռք է բերում այնպիսի կարևոր անձնային որակներ, ինչպիսիք են ջանասիրությունը, բնությանը օգնելու պատրաստակամությունը, սերը դեպի բնությունը, ապրումակցումը և այլն: Այս հարցի կարևորությունը իրենց ժամանակին հատկապես շեշտել են հայ մանկավարժներ Ա. Բահաթրյանը և Ղ. Աղայանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ՝ մանրամասնորեն ուսումնասիրելով առարկայի ուսուցման ընթացքում ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացման վերաբերյալ առկա տեսական նյութերը ու գործնականում կիրառելով դրանք, եկանք այն եզրահանգմանը , որ առարկայի դասավանդման ընթացքում կիրառելով ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ կարող ենք զարգացնել սովորողների ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը ։

Ստեղծագործական ունակությունները բնածին են: Ստեղծագործելու, արարելու ցանկությունն ու գենը յուրաքանչյուր մարդու մեջ է դրված, այլ բան է, թե ինչպես է նա այդ ունակությունը զարգացնում և դրսևորում, ինչ չափով է արտացոլում առօրյայում: Ստեղծագործական ունակությունների զարգացման հրաշալի շրջան է դպրոցական տարիքը: Ուսումնական հաջող գործընթացը, ծրագրերն իրենց հերթին կարող են նպաստել ստեղծագործական ունակությունների զարգացմանն ու դրսևորմանը: «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի տեխոլոգիական համակարգը հնարավորություն է տալիս ապահովել կրտսեր դպրոցականի էկոլոգիական դաստիարակությունը՝ զարգացնելով նրա ստեղծագործական ու նախաձեռնողական կարողությունները: Այս պարագայում հատկապես կարևորվում է դպրոցականի կողմից շրջակա միջավայրի՝ բույսերի, ծաղիկների գույնի, հոտի, ձևի, կենդանիների վարքի ընկալումը, որով նրանք տարբերվում են միմյանցից: Միաժամանակ նպաստում է դիտելու, համեմատելու, հակադրելու, համակարգելու երեխայի ունակությունների զարգացմանը: Այս նպատակի իրականացման հարցում չափազանց մեծ է էքսկուրսիաների դերը, քանի որ դրանց նպատակաուղղված կազմակերպումն ու անցկացումը նպաստում է շրջակա միջավայրի վերաբերյալ երեխայի մեջ գիտելիքների ձեռքբերմանը, հարստացմանն ու մտահորիզոնի ընդլայնմանը: Մեծ է հեքիաթների, բնության մասին չափածո և արձակ մանկական ստեղծագործությունների, երգարվեստի, պարարվեստի դերը. դրանք ուղեկցում են երեխաներին կյանքի առաջին իսկ տարիներից՝ նպաստելով երեխայի և՛ գեղագիտական, և՛ էկոլոգիական դաստիարակությանը:

Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը սովորողների ստեղծագործական հմտությունների զարգացման կարևոր պայման են: Ստեղծարարությունը սովորողի զարգացման և դաստիարակության գործում մեծ դեր ունի: Շատ կարևոր է, որ երեխայի շրջապատում կամ ընտանիքում լինեն նման մարդիկ, որոնք կկարողանան գնահատել նրա ստեղծարարական հմտությունները, պայմաններ ստեղծել դրանց զարգացման համար: Ստեղծարարական հմտությունների զարգացման ընթացքը կախված է ուսումնական գործընթացի բնույթից:

Սովորողների ստեղծագործական ունակությունները հնարավոր է զարգացնել տարբեր առարկաների ուսուցման ժամանակ համապատասխան մեթոդների կիրառմամբ: Ուսուցման գործընթացում պետք է համապատասխան պայմաններ ու միջավայր ստեղծել դպրոցականի ստեղծագործական կարողության դրսևորման ու զարգացման համար:

Ի տարբերություն ուսումնական այլ առարկաների՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկան ենթադրում է ինտեգրված բնույթ՝ պայմանավորված հետևյալ առանձնահատկություններով.

1.դասընթացում ներառված են աշակերտների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաներ,

2.դասընթացի իրագործման կարգը համատեղ ծրագրվում է ուսուցիչների և աշակերտների կողմից,

3.իրեն շրջապատող աշխարհին ծանոթանալուն զուգահեռ երեխան անընդհատ փորձում է ընդլայնել իր պատկերացումները, մտահորիզոնը՝ ձեռք բերելու կայուն գիտելիքներ, ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծագործական կարողություններ և հմտություններ տարբեր առարկաներից ու ոլորտներից:

Ուսուցման ընթացքում աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ իրենց ունեցած գիտելիքների հիման վրա ինքնուրույն լուծում են պրոբլեմային խնդիրներ, նախաձեռնում ու հաղթահարում դժվարին իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, հանդես բերում ստեղծագործական նոր լուծումներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ,

ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահոգությունները ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի: Նպատակը սովորողների ստեղծագործական զարգացումն է, ինչը կարելի է իրականացնել պրոբլեմային խնդիրները լուծելու միջոցով: Հոգեբաններն ապացուցել են, որ ինքնուրույն ու ստեղծագործական մտածողությունն սկսվում է այն պահից, երբ մարդը հանդիպում է մտավոր խոչընդոտների, որոնք հաղթահարելու համար նրա իմացած գիտելիքները չեն բավարարում,ուստի նա վերհիշում է իմացածը, պարզում իրեն պակասող գիտելիքները և որոնողական գործողություններով փորձում է հաղթահարել առաջադիր խնդիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Պ., Ինքնուրույնության և ստեղծագործական կարողությունների զարգացումը, Երևան, 1974:
2. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության խնդիրը մանկավարժության մեջ, Երևան, 2009:
3. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
4. Թորգոմյան Լ., Մանկավարժությանընդհանուր հիմունքներ, Երևան, 2005:
5. Богоявленская Д. Б., Психология творческих способностей — М., Издательский центр «Академия» 2002.
6. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972.
7. Николаева Е.И., Психология детского творчества, Питер, 2010.
8. Седьмая волна психологии, Выпуск 1,/ Сб. под ред. Козлова В.В., Качановой Н.А. - Ярослваль, Минск, 2006.
9. Чернецкая Н. И., Творческое Мышление как высшая форма мышления, Вестник Адыгейского государственного университета. Серия 3: Педагогика и психология, № 2, 2009.